



Փ Ա Ռ Ք Մ Ե Օ Ս Ա Օ

ՄԽԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ

(Ծննդյան 300-ամյակի առթիվ)

Լրացավ հայ մշակույթի երախտավորներից մեկի՝ Մխիթար Սեբաստացու ծննդյան 300-ամյակը, մի մարդու, որը հիմնադիրը հանդիսացավ ս. Ղազարի պատմական մենաստանի: Այս մենաստանը, որը գտնվում է Վենետիկի խաղաղ ծովալճակում ցրված բազմաթիվ կղզիներից մեկում, մշակութային մի կարևոր օրրան է եղել մեր ազգային գրականության բարգավաճման և մեզ ծանոթ է Հայոց վանք կամ Կարմիր կղզի անուններով:

Այս պատմական կղզյակում է աճա, որ Մխիթարը հիմքը դրեց իր անունը կրող ազգային մի հաստատության և կարողացավ, ինչպես շատ գեղեցիկ կերպով բնորոշել է մեր բազմավաստակ գրողներից Արշակ Չոպանյանը՝ «ոչինչե՛ն աշխարհ մը ստեղծել»:

Որպեսզի հնարավոր լինի հայ ժողովրդի տաղանդավոր այս զավակի կողմից ձեռնարկված և նրա հաջորդների ջանքերի շնորհիվ ի կատար ածված գործի մասին

ճշգրիտ և ամբողջական պատկերացում ունենալ, որպեսզի հնարավոր լինի մանավանդ ըստ էության արժևորել այն ճիգը, որ բազում տարիներ անխուճ կերպով ի գործ դրեցին Մխիթարն ու նրա հաջորդները մշակույթի բոլոր ասպարեզներում, անհրաժեշտ է այստեղ սեղմ տողերի մեջ ուրվագծել այն պատկերը, որ ներկայացնում էր հայկական իրականությունը իր բաղաբաղական, ընկերային ու տնտեսական դրությամբ մինչև Մխիթարյան հայրերը:

16-րդ և 17-րդ դարերը հայ ժողովրդի կյանքի և մասնավորապես հայ գրականության ամենամռայլ, ամենաանուշ շրջանն են կազմում: Այս շրջանում մահմեդական թուրքերն արդեն վաղուց ամրացել էին բյուզանդական գահի վրա և իրենց ուզմատենն ախորժակներին հագուրդ տալու համար շարունակ արշավանքներ էին կատարում՝ ասպատակելով ու ավերելով հարևան երկրները: Հայաստանը, ինչպես հա-

ճախ, այս շրջանում ևս ավերիչ պատերազմների ասպարեզ էր դարձել երկու մահմեդական պետությունների միջև: Մի կողմից թուրքերն էին ավերում, իսկ մյուս կողմից նրանց կիսատ թողածը՝ պարսիկները: Եթե հարյուրավոր տարիներ տևող այդ պատերազմների մեջ փոքրիշատե լիճում էին կարճատև խաղաղության շրջաններ, այդ ժամանակ էլ հայ ժողովուրդը կրոնի պատճառով էր հալածվում, ճնշվում հարկերի տակ և ենթարկվում ամենալայնագ կեղեքումների:

Հայ ժողովրդի անկումն իր գագաթնակետին է հասնում հատկապես 17-րդ դարի առաջին տասնամյակներին, երբ պարսից Շահ-Աբաս թագավորի հրեշտյին ծրագրով հարյուր հազարավոր հայեր ենթարկվում են դաժան բռնազաղթի և որպես դրա քնական հետևանք՝ սովի, բնաջնջումի, ֆիզիկական և ու բարոյական լլկանքների: Չանգվածային այս տեղահանությամբ վերջին հարվածն էր տրվում հայոց հին քաղաքակրթությանը, որն իր հոգեվարքն էր ապրում: Ահավոր տարիներ էին մեր ժողովրդի պատմության մեջ Շահ-Աբասյան յիվային եղեռնագործությանը հաջորդած տարիները, երբ իր հիմքից սարսափած ու զահանդած հայ ազգի մեջ համատարած իշխում էր ավերակ ու թանձր տգիտություն, երբ, ինչպես գրում է ժամանակի հայտնի մեր վարդապետ պատմագիրը, «տգիտությամբ խոպանացեալ և կորդացեալ էր ազգս Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուիս, այլև ոչ զգիրս գիտէին և զգօրութիւն գրոց. վասն զի անպիտանացեալ էր գիրքն յաչս մարդկան...» և այլն: Անկումը զարհուրելի էր. մարդիկ կտրվել էին իրենց լուսավոր անցյալից այն աստիճան, որ, ըստ մեր պատմագրի հաղորդած տրվյալների, հոգևորականները աշխարհական հագուստով էին շրջում, տրեխներով սեղան բարձրանում և մոռացել էին .նույնիսկ շատ եկեղեցական կարգեր:

Բարեբախտաբար, սակայն, հայ ժողովրդի մեջ կենսական ուժը դեռ չէր մահացել, և հենց հնի մահվան մեջ էր, որ սկսեց ծնվել նորը՝ հնի վերածնությամբ: Հայությունը մի վերջին հերոսական ճիգ ի գործ դրեց փրկվելու համար վերջնական անկուսից: Եվ ահա 17-րդ դարի սակավաթիվ լավագույն մարդկանց ամբողջ ձգտումը կենտրոնանում է այն բանի վրա, որ կենդանացնեն մեռնող հայ կյանքը: Դրա համար երկու ճանապարհ է ներկայանում նրանց. վերածնել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը և ապա օգտվել եվրոպական լուսավորությունից, որը հսկայական դեր կարող էր ունենալ մեր նոր մշակույ-

թի ծաղկման համար: Այս երկու ուղղությամբ առաջ է ընթանում մեր մտավոր շարժումը Շահ-Աբասի օրերից սկսած մինչև 19-րդ դարի վերջը՝ իհարկե ժամանակի բնական շրջափոխությամբ:

16-րդ դարից սկսած մինչև 17-րդ դարի վերջին տասնամյակները երկարող հայ ժողովրդի ընկերային-քաղաքական կյանքի համատոտ բնութագիրը պարզելուց հետո, այժմ կարող ենք կանգ առնել մի մարդու կյանքի ու գործունեության վրա, որը, Ամբերդցի Սարգիս Եպիսկոպոսի և Տրապիզոնցի տեր Կիրակոսի հետ, որոնք բուն երկրի մեջ հիմնեցին Սյունյաց անապատը Տաթևի մոտ, հնի մեռելության պայմաններում վերածնության մի մեծ շարժում ստեղծեց մեր մտավոր զարգացման պատմության մեջ:

Այժմ համառոտակի կանգ առնենք Մխիթար Սեբաստացու կյանքի և գործունեության վրա:

Մխիթարը ծնվել է Չորրորդ Հայքի Սեբաստիա քաղաքում 1676 թվականին: Նրա հայրը Պետրոս անուկով մի ազնիվ ու եկեղեցաւեր մարդ էր, միջակորյար մի առևտրական: Հինգ տարեկան հասակում նա գրել-կարդալ է սովորում տեղական մի քահանայի մոտ: Ի բնե լինելով խիստ տպավորվող երեխա՝ մի կողմից քահանայի ջանքած ուսումը, իսկ մյուս կողմից ծնողների բարեպաշտությունը նրան մղում են կրոնասիրության: Տաք տարեկան հասակում նա մտնում է տեղի ս. Նշան վանք և իր պատանեկան տարիներից իսկ սկսում անապատականների ու ձգնավորների օրհնակով իր անձը բռնադատել ամենախիստ պահեցողությունների: Այստեղ 1691 թ. 15 տարեկան հասակում ստանում է սարկավագության աստիճան: Սակայն այդ վանքը նեղ է գալիս նրան, և նա ցանկանում է դիմել գիտության ավելի մեծ մի վառարանի: Այդ տարիներին Էջմիածնից որպես նվիրակ Սեբաստիա էր ժամանել Միքայել արքեպիսկոպոսը, որի հետ Մխիթարը մեկնում է հայոց հավատքի մեծ օրրան: Ս. Էջմիածինը ուսումնատենչ պատանուն ներկայանում էր իբրև ավետյաց երկիր: Էջմիածնում նա երկար չի մնում և գնում է Սևանա վանք: Բայց այստեղ նա չի գտնում իր երազած ցանկալի վանական մթնոլորտը:

Մխիթարը որոշում է թողնել Սևանը և գնալ դեպի անձանդորը՝ չիմանալով որ և ինչպես իրագործել իր իդեալը: Հեռանալով Սևանից՝ նա ճանապարհ է ընկնում դեպի իր ծննդավայր՝ Սեբաստիա: Ծանապարհին, սակայն, կանգ է առնում Բաւեհի վանքում: Մոտավորապես տարի ու կես

Մխիթարը մնում է այստեղ և մեծ խանդավառությամբ ուսուցանում: Այս վերադառնում է իր հայրենի քաղաք և դարձյալ մտնում ս. Նշան վանք՝ որպես ուսուցիչ: Վանքում ուսուցանելու հետ միաժամանակ, նա լծվում է ստեղծագործական աշխատանքի. գրում է ուսումնասիրություններ, հորինում կրոնական տաղեր, որոնք երգվում են եկեղեցում իբրև ժամասացության երգեր: Բայց նա չի բավարարվում դրանով. երագում է ավելի մեծ արդյունք ձեռք բերել և որոշում է հեռանալ Սեբաստիայից՝ օտար միջավայրում ցանկանալով կատարելագործել իր ուսումը և գլուխ բերել իր գործը այնպես, ինչպես ինքն էր երագում: Նա թողնում է իր ծննդավայրը: Կյանքի հեղհեղուկ ալիքները նրան նետում են Հալեպ: Այստեղ նա ծանոթանում է լատին կրոնավորների հետ, որոնց մեջ առանձնապես նրա համակրանքն է գրավում Անտոն անունով մի Հիսուսյան քահանա: Սրա մոտ Մխիթարը մնում է երեք ամիս: Հալեպում Մխիթարի մեջ միտք է ծագում՝ հիմնել կաթոլիկ միաբանությունների նման մի հաստատություն Հայաստանի վանքերում: Բայց բավական չհամարելով իր ստացած կրթությունը, Մխիթարը վառ ցանկություն է ունենում Հոռո գնալու, որպեսզի այնտեղ ստանա հիմնավոր կրթություն և կարողանա իրագործել իր ծրագիրը: Նա այն համոզումն ուներ, որ իր ազգը վերանորոգելու համար անհրաժեշտ էր հիմնել մի շատ ուժեղ կովան, մի այնպիսի հաստատություն, որի իրականացումը, ըստ նրա, անհնարին էր Հայաստանում այդ ժամանակ գոյություն ունեցող պայմաններում: Այդ իսկ նպատակով Մխիթարը Հալեպից գնում է Ալեքսանդրիա, այստեղ մտնում ֆրանսիական մի նավ և ուղևորվում դեպի Հոռո: Սակայն նա չի կարողանում Հոռո հասնել: Օսմապարհին բորբոքված սաստիկ մի ժանտատենդից հիվանդանում է նաև Մխիթարը և ստիպված լինում իջնել Կիպրոս կղզի, ուր անցկացնում է ծանր ու տառապագին օրեր: Հիվանդությունը գնալով սաստկանում է և հապաղեցնում նրա ծրագրի իրականացումը: Խնամվելու համար նա ապաստանում է Սալամինայի հայ վանատանը, ուր մնում է որոշ ժամանակ:

Մխիթարը առողջանալուց հետո մի բարեսիրտ հույնի օգնությամբ նավ է նստում և հեռանում Կիպրոսից: Այս անգամ նա ափ է իջնում Սելևկիայում, որտեղ մնում է միաժամանակ՝ դրամի պակասից անշարժացած, և որոշում նորից վերադառնալ իր ծննդավայր՝ Սեբաստիա, ուր նորից եռանդով փարվում է իր նվիրական գաղափարին: Հայրենի երկրի անմխիթար փնակը,

ազգականների հետ նրա շփումը նրան մղում են Հոռո գնալու ծրագիրը մի կողմ դնել: Նա նորից մտնում է ս. Նշան վանք և իրեն նվիրում գրական ու կրոնական աշխատանքների: 1696 թ. նա վարդապետ է ձեռնադրվում ս. Նշան վանքում: Այս նշանակում է, որ Մխիթարն այդ միջոցին դեռ վերջնականապես չէր խզել հարաբերությունները հայ առաքելական եկեղեցու հետ: Հենց այդ շրջանից էլ նա մտածում է իր ըմբռնած եղանակով միաբանություն հիմնելու ծրագիրը գործադրել: Նա ցանկանում է պատրաստել լրջորեն զարգացած, բարձրագույն մի իդեալի նվիրված եկեղեցականների մի խումբ, որը կարողանար պայքարել տգիտության, հետամնացության դեմ և աշխատել հայ եկեղեցին մոտեցնել Հոռոի Աթոռին: Մխիթարը մտածում է Սեբաստիայից ավելի հարմար և նպատակավոր մի կենտրոնում հաստատել իր միաբանությունը և ուղևորվում է Կոստանդնուպոլիս: Բայց Պոլսում ևս նրա ծրագիրը մեծ արգելքների է հանդիպում: Պոլսից Մխիթարը երկու աշակերտների հետ ծրագրում է մեկնել Տրապիզոն: Օսմապարհին ահավոր մի պեկոծություն փչե է մնում ծովամույն անի նրանց: Նա ետ է կանգնում Տրապիզոն գնալու մտքից և ուղևորվում Էրզրում, ուր մի որոշ ժամանակ մնում է, քարոզում, գործում, քայց այստեղ ևս հաջողություն չգտնելով՝ նորից վերադառնում է Պոլիս:

Այդ ժամանակներում Պոլսում ծայր էր ստել որքան մոլեգին, նույնքան անհեթեթ դավանական մի պայքար կաթոլիկ և լուսավորչական հայերի միջև: Կաթոլիկները նախատում և արհամարհում էին լուսավորչականներին, իսկ վերջիններս աշխատում էին կաթոլիկներին որպես խոռվարարներ ու դավաճաններ ցույց տալ հաշտ թուրքական կառավարության և պետական խտտագույն պատիժներ պահանջել: Այդ ժամանակ Մխիթարը ամեն ջանք գործ է դնում՝ հայ ժողովրդի երկու պատակոված հատվածներին հաշտեցնելու և պեկոծված ազգային կյանքում խաղաղություն հաստատելու համար:

Դավանական այդ բուռն պայքարների ժամանակ Մխիթարը չի հուսահատվում և շարունակում է հետապնդել իր ծրագիրը: 1701 թվականի ապրիլին Մխիթարը Կ. Պոլսի թաղերից մեկում վարձում է մի բնակարան, իր գործին նվիրված հավատարիմ աշակերտներին հավաքում իր շուրջը, պարզում նրանց իր ծրագիրը: Եվ ահա այդտեղ, այդ համեստ բնակարանում է, որ հիմքն է դրվում սպագա այն

մեծ հաստատության, որը պիտի դառնար Մխիթարյան հայտնի միաբանությունը:

Կ. Պոլսում էլ ավելի բորբոքվում է միջ-դավանական պայքարը: Այդ ամուլ պայքարների ժամանակ Մխիթարը գալիս է այն եզրակացության, որ Տաճկաստանում կամ էլ Հայաստանում միանգամայն հնարավոր չի լինելու իրեն գլուխ բերել իր գործը. նա նորից դառնում է իր նախկին գաղափարին՝ գնալ Եվրոպա, իր միաբանությունը եվրոպական ազատ միջավայրում հաստատելու և իր ծրագիրը իրականացնելու համար: Ծուռով նա իր մտ է կանչում իր այն աշակերտներին, որոնց նա հայկական գավառներ էր ուղարկել՝ քարոզելու, ուսուցանելու, նոր աշակերտներ պատրաստելու համար: Բոլորը գալիս-հավաքվում են կապուչինների վանատանը: Այստեղ որոշում են իրենց միաբանությունը հաստատել Հունաստանում՝ Մորեայի կողմերը, որ այն ժամանակ գտնվում էր Վենետիկի տիրապետության տակ: Մխիթարը հայտնում է, որ միաբանությունը հաստատված է: Աղոթքներ են կարդացվում, խնդրվածքներ լինում, և բոլորն էլ ուխտ են անում իրենց նվիրել սրբազան գործին:

Ահա այսպես է ծնվում Մխիթարյան միաբանությունը, որի կազմակերպիչն ու ոգին Մխիթարն էր:

Այն տարիներին, երբ Մխիթարը, հանուն հայ ժողովրդի լուսավորության, Եվրոպայի դռներն էր բախում, այդ նույն շրջանում, հայ ժողովրդի կյանքի այդ ծանր և անմխիթար պայմաններում, մի ուրիշ հայ հոգեվորական, մի նվիրյալ անձնավորություն՝ Կ. Պոլսի հայոց երջանկահիշատակ տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքը, ասպարեզ էր իջնում նույն բարձր և վեհ իդեալի իրականացման նպատակով:

Առաջիկա տարի լրանում է ժամանակի այդ մեծ լուսավորչի ծննդյան 300-ամյակը: Ամենայն Հայոց Հայրապետի սույն թվականի օգոստոս 29 սրբատառ կոնդակի հրահանգով 1978 թվականը հայտարարվում է հոբելյանական տարի՝ նվիրված լուսաբնակ Հովհաննես Կոլոտ պատրիարքի կյանքին ու գործունեությանը:

Կոլոտը և իր ընկեր ու գործակից Ամբրոյու վանքի մյուս հրաշագործ վարդապետը՝ Երուսաղեմի պատրիարք Գրիգոր Շղթայակիրը, այդ խավար ժամանակաշրջանում, ինչպես նշում է Վեհափառ Հայրապետը իր կոնդակում, «ի վերուստ կոչվեցան փարատելու խավարը հայ հոգիներուն և դալար պարտեզի վերածելու անապատը հայ եկեղեցվո անդաստանին»: Եվ այդ զարթոնքը կատարվեց հայ հողի վրա, հայ ժողովրդի ծոցում:

Հովհաննես Կոլոտի երազանքն էր՝ վերստին կյանքի կոչել մայր երկրում երբեմնի մեր նշանավոր ու ծաղկուն վանքերի կրոնական, մշակութային, կրթական ու դաստիարակչական ավանդությունները, վանքեր, ինչպես օրինակ՝ Հարանց անապատը, Էջմիածինը, Լիմ անապատը, Ամբրոյուն, Գլակա վանքը և այլն, որոնք, հակառակ այդ ժամանակաշրջանի քաղաքական ու տնտեսական խիստ անբարենպաստ պայմաններին, դեռևս անթեղված էին պահում հայ մշակույթի վստահանի շիջող վերջին կայծերը: Բավական է արձանագրել, որ Հովհաննես Կոլոտը պատրաստեց և հայ եկեղեցու ու մշակույթի ծառայությանը նվիրեց մոտ երեսուն ուսյալ և գիտուն հոգևորականների պատկառելի մի սերունդ: Փառավոր փաստ է նաև այն, որ Կոլոտը հայադավան ուղղափառության որպես կորույթի պաշտպան, իր պատրիարքության 27 տարիների ընթացքում հրատարակեց շուրջ հարյուր անուն կրոնական-եկեղեցագիտական ու պատմական գրքեր՝ նվիրված մեր եկեղեցու, մեր ժողովրդի ազգային կրոնական ավանդությունների պաշտպանությանը, միշտ պահելով կապը մայր եկեղեցու կանտրոնի հետ: Մխիթար Մեքաստացին սակայն գնաց իր նախասիրած ճանապարհով նույն ազնիվ և բարի նպատակի համար՝ հայրենիքից դուրս եվրոպական քաղաքակրթության հետ անմիջական շփման մեջ մտնելու և հոռմեական եկեղեցուն հարելու մեջ տեսնելով իր լայն ծրագրի իրագործման նախադրյալները:

Այս փակագծից հետո, վերադառնալով Մխիթարի գործունեությանը: Մխիթարն ու իր միաբանության առաջին անդամները, ուրեմն, որոշում են իրենց միաբանությունը հաստատել Մորեայի կողմերը:

Վենետիկի դեսպանը, որ միաժամանակ Մորեայի կառավարիչն էր, իր հովանավորության տակ է առնում Մխիթարին: Նրա հանձնարարականներով տեղի իշխանները Մեթոնում հող են տալիս Մխիթարին և թույլատրում եկեղեցի ու մենաստան հաստատել: Հասնելով իր վաղեմի տեճանքին՝ Մխիթարը ոչ մի ջանք չի խնայում այդ նպատակով միջավայրում բարեկարգելու և առաջ տանելու համար իր գործը: Աշակերտների թիվը բավականին մեծացել էր: Նա մշակում է վանական մի կանոնադրություն և իր աշակերտներից երկուսին ուղարկում Հոռո՝ Կղեմես ԺԱ Պապի մոտ՝ այն վավերացնել տալու համար: Սակայն այս գործը հեշտությամբ գլուխ չի գալիս: Պատճառը լատինամոլ կաթոլիկ հայեր են լինում, որոնք նախանձից կուրացած՝ ամեն տեսակ ամբաստանություններով ու ինտ-

րիզներով աշխատում են տապալել Մխիթարի գործը: Վավերացումը ձգձգվում է սինչև 1712 թվականը, երբ, վերջապես, հաստատվում է Մխիթարյանց կանոնադրությունը, և ինքը՝ Մխիթարն էլ անվանվում է աքքա:

Նա հաջողում է իր կազմած հասակագծի համաձայն մի մենաստան և մի եկեղեցի կառուցել: Միաբանությունն սկսում է ապրել խաղաղ ու շինարար աշխատանքով:

Հագիվ այս փոքր հաջողությունը ձեռք էր բերված, երբ մի շատ ավելի մեծ դրժբախտություն է պայթում Մխիթարի գրչիսին: Թուրքական կառավարությունը պատերազմ է հայտարարում Վենետիկի դեմ. օսմանցիները արշավում են Մորեայի վրա. պաշարվում է Մեթոնը. իտալացիները, անկարող դիմադրելու, անձնատուր են լինում. Մխիթարը ստիպված է լինում ամեն ինչ թողնել և 11 միաբանների հետ մի հին նավի մեջ մտնել ու փախչել դեպի Վենետիկ:

Վենետիկում Մխիթարը դիմում է տեղի ազդեցիկ մարդկանց, որպեսզի արտոնություն տրվի իրեն այնտեղ հաստատելու իր միաբանությունը: Ծերակույտի հաստատած օրենքը թույլ չէր տալիս, որ Վենետիկում կրոնական նոր միաբանություններ հիմնվեն: Մեծ դժվարություններ հաղթահարելուց հետո, ի վերջո Մխիթարը հաջողում է ձեռակույտի համաձայնությունն ստանալ՝ պայմանով, որ նա իր բնակությունը հաստատեր քաղաքից դուրս, հեռու մի տեղ: Մխիթարը ընտրում է Վենետիկի արևելյան մասում գտնվող կղզիներից մեկը, որ շատ փոքր էր, բայց մեծ հարմարություններ էր ներկայացնում: Կղզում մշտական բնակիչներ չկային. դա մի լքված ու վայրի տեղ էր, որ մի ժամանակ բրոտներ էին ապրում: Կար մի խարխուլ եկեղեցի, որը Ասամաձաշնչի աղքատ Ղազարոսի անունն էր կրում. հենց այդ անունով էլ այդ կղզին կոչվում էր ս. Ղազարի կղզի: Մխիթարը որոշում է այդտեղ հաստատել իր միաբանությունը և խնդրում է մեծավորներին, որ իրեն շնորհիվ այդ կղզին: Ծերակույտը ընդունում է նրա խնդիրը, և 1717 թ. հրովարտակով այդ կղզին ճանաչվում է Մխիթարյանների սեփականությունը: Իրեն հատուկ անսպառ եռանդով և շինարարական կազմակերպչական տաղանդով Մեքսատացին սկսում է հարմարություններ ստեղծել, շինություններ կերտել բնակության համար: Կառուցվում է եկեղեցի և նրան առընթեր՝ դպրոց, որը առաջին հայկական դպրոցն էր եվրոպական հողի վրա:

Հիմնելով միաբանություն, Մխիթարը նրա

առջև զձում է գործունեության ուղեգիծ և իր անձնական կյանքով ցույց տալիս, որ միաբանների աշխատանքի ամենակարևոր կողմը պետք է լինի գրական գործունեությունը: Այդ նպատակով Մխիթարը իր աշակերտներից շատերին ուղարկում է Հայաստանի զանազան կողմերը, որպեսզի շրջեն ու հավաքեն հայ հին մշակույթի անգին գոհարները, հայոց անցյալ գրականությունը, որ դեռ ձեռագրերի մեջ էր և ցրված վանքերում, եկեղեցիներում, մասնավոր մարդկանց տներում: Մխիթարյան վարդապետները հավաքում են ազգային մշակույթի այդ գանձերը և խնամքով տանում Լուսախա: Այստեղ հայրենիքից բերված գանձերի շուրջը մեծ աշխատանք է ծավալվում: Հաստատվում է սեփական տպարան, որտեղից լույս են տեսնում արժեքավոր գրական աշխատություններ: Իր հսկայական ջանասիրությամբ Մխիթարը նախանձելի մի օրինակ է դառնում իր բոլոր վարդապետների համար: Ս. Ղազարի մեջ ամբողջ 31 տարի նա լծվում է գիտական ծավալուն աշխատանքի: Իրար ետևից լույս է ընծայում հայերենի մի շքեղ տպագրություն, մեկնաբանական բազմաթիվ աշխատություններ՝ հմտությամբ լեցուն, պարզ ոճով շարադրված. մեկնություն Ժողովողի, մեկնություն Մատթեի, թարգմանություններ եվրոպական գրքերի, Ալբերտ Մեծի հաստատ Աստվածաբանությունը, Ռոդրիգոյի «Յադագս երից ուխտից»-ը և կրոնական բանաստեղծություններ՝ ներշնչմամբ գրված: Այս բոլորի մեջ սակայն առանձին գովասանքով պետք է հիշել նրա մի անագին գործը, որով նա վերջացնում է իր բազմարդյուն կյանքը և հանդիսանում հայոց լեզվի մեծ վերանորոգիչներից մեկը: Դա «Բառգիրք հայկազգեան լեզուի» սովորաձավալ աշխատությունն է, որը լույս է տեսնում 1749 թ.: Մինչ այդ չունեինք հայերենի բացատրական բառարան՝ այս անվան իսկական իմաստով: Մի քանի լատին վարդապետներ կազմել էին լատիներեն-հայերեն բառարաններ, բայց դրանք չափազանց պակասավոր, սխալ ու աղքատ էին: Կար և մի հայերեն տպագրված բառարան, որ կազմել էր Երեմիա Մեղրեցի վարդապետը. սա նույնպես շատ համատու էր և պարունակում էր միայն Աստվածաշնչի բառերը, որոնց բացատրություններն էլ չափազանց աղքատ էին ու թերի: Մխիթարը ծրագրում է մի շատ հիմնավոր, բայց և շատ դժվար իրագործելի աշխատանք. հավաքել հայոց հին գրականության բոլոր բառերը, բացատրել դրանք այն մտքով, ինչպես հասկացել և գործ էին անել հեղի-

նակները: Ծախս ու աշխատանք չխնայելով՝ նա զանազան հայաբնակ վայրերից բերել է տալիս գրքեր և մանրամասն ու բարեխիղճ ուսումնասիրություններ կատարում: Նա գտնում է հունարենից և լատիներենից թարգմանված գրքերի բնագրերը, համեմատում դրանք թարգմանությունների հետ և գտնում բառերի ճշգրիտ իմաստը: Մխիթարը ս. Սահակի և ս. Մեսրոպի աշխատությանը թարգմանված Աստվածաշունչը համեմատելով հունարեն բնագրի հետ՝ աշխատում է գտնել, թե նրանց ծանանակ ինչպես էր հասկացվում այս կամ այն բառը և հանգում այն եզրակացության, որ Աստվածաշնչի թարգմանությունը 5-րդ դարում իսկապես եղել է ոսկեդեմիկ: Նա բացատրում է բառերի՝ նշանակությունը, և որպեսզի այդ բացատրությունները քմածին չթվան, բերում է վկայություններ գրքերից: Բավական չհամարելով այդ կերպով պարզած բացատրությունները՝ Մխիթարը դիմում է կենդանի լեզվին. հարց ու փորձ է անում վեներտիկում եղած հայերին և ժողովրդական լեզվից էլ շատ հարստություններ է դուրս բերում: Սակայն կոթողական այս աշխատության տպագրությունը դեռ չվերջացրած՝ Մխիթար արքան վախճանվում է, 1749 թ. ապրիլին, 74 տարեկան հասակում և թաղվում իր շինած վանքի մեջ:

Մխիթարի մահից հետո նրա աշակերտները և այնուհետև մխիթարյան հայրերի բազմաթիվ սերունդներ նույն ոգով ու նույն եռանդով շարունակեցին նրա սկզբնավորած գրական, մշակութային, կրթական գործունեությունը՝ ուսումնական հաստատությունների բացումով, դարձյալ եվրոպական հողի վրա, «Բազմավեպ» և «Հանդես ամօրյա» պարբերաթերթերի հրատարակումով, որոնք շարունակում են լույս տեսնել առ այսօր, հունա-հռոմեական և եվրոպական դասական լավագույն երկերի գրաբար և ապա աշխարհաբար թարգմանություններով, բացատրական, թարգմանական և այլ բնույթի տասնյակ բառարանների կազմությամբ, քերականական բազմաթիվ աշխատություններով, ինչպես նաև նոր թափ տալով հայագիտության ուսումնասիրությանը Եվրոպայում:

Երբ այսօր տարիներ հետո հարկ է լինում անդրադառնալ Մխիթարյան միաբանության գործունեության տարողությանն ու արժեքին՝ հայ ժողովրդի մշակութային կյանքում, մեր մտքի դատաստանի առջև Մխիթարի և նրա հաջորդների ջանքերը զայիս-ամփոփվում են հիմնականում գործունեության երկու ոլորտներում: Դրանցից առաջինը հայ մտքի հիմնավորց հիշատա-

կարանները մոռացության փոշու տակից դուրս բերելու և հայ ժողովրդի զավակներին ծանոթացնելու ուղղությամբ տարված աշխատանքի ոլորտն է, իսկ երկրորդը՝ հայ միտքն արևմտյան քաղաքակրթության հետ հաղորդակցության մեջ դնելու ուղղությամբ տարված աշխատանքի ոլորտը: Կործանության այս երկու բնագավառներում էլ Մխիթարյան հաստատության կատարած դերը անշուշտ մեծ է եղել, բայց երկրորդի մեջ է մանավանդ, որ պետք է որոնել ու հաստատել Մխիթարյանների կատարած գործի կարևոր նշանակությունը. որովհետև հայ մտքի հնադարյան արժեքները կորստից փրկելով լույս աշխարհ բերելու ուղղությամբ նույնպիսի ծանրակշիռ աշխատանք կատարել են նաև մեր մյուս կենտրոնները, ինչպես՝ Երուսաղեմի, Էջմիածնի միաբանությունները:

Այստեղ պետք է արձանագրել սակայն, որ հայ մշակույթի արժեքները եվրոպացիներին ծանոթացնելու շնորհակալ գործում Մխիթարյանները, դժբախտաբար, միշտ չէ, որ մնացին գիտական բարձրության վրա, և միշտ չէ, որ անաչառ, անկողմնակալ մուսեցում հանդես բերեցին հայ եկեղեցու և հայ ժողովրդի անցյալի պատմության և մեր ազգային-եկեղեցական մեծ անձնավորությունների կյանքի ու նրանց գործի զնահատման ուղղությամբ:

Հայ ժողովրդի և հայ մշակույթի վերագարթոնքի մեջ Մխիթարյանների կատարած գործը, անկասկած, մեծ է, բայց ամբողջ գործը չէ. նրանց հետ զուգահեռաբար, 19-րդ դարում հատկապես, Կ. Պոլսի և Ջմյուռնիայի մեր լուսավորչական մտավորականների գործունեությունը մեկ կողմից, իսկ մյուս կողմից Արևելահայաստանում ծավալված լուսավորական շարժումը մանավանդ, հսկայական տեղ ունեն ծանանակակից հայության իմացական ու բարոյական վերականգնման և ազատագրական գաղափարների ձևավորման գործում: Անցյալ դարի մեր լուսավորական շարժման առաջավոր գործիչները թե՛ Պոլսում ու Ջմյուռնիայում և թե՛ Մոսկվայում ու Թիֆլիսում կատարեցին այնպիսի գործ, որ նվազ կարևոր չէ, քան Մխիթարյանների գործը և, մինչև իսկ, որոշ իմաստով, ավելի կարևոր: Մխիթարյանները, ապրելով վանական փակ միջավայրում և հետեմապես կտրված լինելով հայ ժողովրդի սայր զանգվածի կյանքից ու նրա մայր եկեղեցուց, անհրաժեշտաբար պիտի ունենային գրքի գործունեություն, այսինքն՝ զուտ գիտական, աշխատանոցային գործունեություն, մինչդեռ Պոլսի, Թիֆլիսի և Ջմյուռնիայի մեր գործիչները, ապրելով ու

գործելով հայ ժողովրդի ծոցում, կատարեցին ավելի կենդանի, ժողովրդի ամբողջական կարիքներին ավելի գոհացում տվող սի գործ. նրանք էին, որ հաստատեցին բուն, անսխալ կապը ժողովրդի և նրա ստավորականների միջև, կազմակերպեցին ժամանակակից մեր լեզուն և գրականությունը իր արդիական ձևի մեջ և ողի հարթեցին մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի համար:

Մյուս կողմից ս. Ղազարի մեջ կղզիացած Մխիթարյան հայրերը չկարողացան ըմբռնել աշխարհաբար լեզվի անխուսափելի անհրաժեշտությունը ազգային նոր գրականության ստեղծման գործում և նույնիսկ դժբախտ փորձեր էլ կատարեցին՝ խափանելու համար նրա բնական առաջընթացը: Ել պատահական չէ, որ դեռ մինչև այսօր էլ, հակառակ մշակված ու կատարելագործված աշխարհաբարի առկայությանը, մխիթարյանների գործածած լեզուն, բացի մի քանի երջանիկ բացատրություններից, ընդհանրապես չոր է, գրքունակ, ջերմոցային, գուրկ ժողովրդական արևոտ, հյութեղ, կենդանի լեզվի գրավչությունից:

Այսօր, դժբախտաբար, Մխիթարյան միաբանությունը այլևս չունի այն վաստակը, որ նա ունեցել է անցյալում: Այսօր Մխիթարյան հաստատությունից դուրս կատարվող մշակութային գործունեությունը, մայր հայրենիքում լինի, թե արտասահմանի հայկական գաղթօջախներում, ավելի կենսունակ է, ավելի շահեկան և համապարփակ, քան այն, որ շարունակում են կատարել մխիթարյանները:

Ինչպես նշեցինք, իր ժամանակին Մխիթար Սեբաստացին հայ ժողովրդի լուսավորության համար Եվրոպայի դռներն էր բացում: Այժմ մեր ժողովրդի կյանքի պայմանները այլ են: Ունենք հայրենիք և պետականություն, որոնց ընձեռած բարենրպատ պայմաններում ոչ միայն աչքի լույսի պես պահպանվում են ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքները, այլև հայ մշակույթը ազատ ու անկաշկանդ ապրում է իր ծաղկման ու զարգացման ամենախուտումնակից շրջաններից մեկը, երբ այդ արժեքները մատչելի են դառնում ուսումնասիրության համար ինչպես հայ ստավորականությանն ու ուսումնասեր հասարակությանը, այնպես էլ օտար գիտնականներին: Սակայն այստեղ ցավով պետք է արձանա-

գրել, որ տարիների ընթացքում մխիթարյանների մոտ հանգրվան գտած հայ ժողովրդի հոգևոր ստեղծագործության արժեքները և մատենագրական-արխիվային բազմաթիվ այլ նյութեր, որոնք հայ ժողովրդի անկապտելի սեփականությունն են, պահվել են և այսօր էլ շարունակում են պահվել «ընդ գրուսնաս»:

Ամեն անգամ, երբ կարիք է զգացվել օգտվելու այդ նյութերից, հաճում հայ մշակույթի զարգացման, մխիթարյանները զլացել են վերոհիշյալ նյութերի մանրաժապավեններն իսկ տրամադրել Հայաստանի գիտական կենտրոններին՝ ուսումնասիրության համար: Նման վերաբերմունք, մենք կարծում ենք, երբեք իրեն թույլ չէր տա Մխիթար Սեբաստացին, որպես հայ մշակույթի մեծ երախտավոր և ջատագով:

Հայ կաթոլիկ համայնքը մեր ժողովրդի թվի խիստ աննշան մեկ տոկոսը կազմող փոքրամասնություն է եղել միշտ: Հակառակ այդ իրողության, Հայոց Հայրապետները միշտ էլ սիրով և հարգանքով են վերաբերվել մրրկավ բաժանված մեր եղբայրներին՝ սպասելով նրանց վերադարձին դեպի հայ ժողովրդի գիրկը և դեպի Հայաստանյայց մայր եկեղեցին: Ամենայն Հայոց Հայրապետները, ինչպես անցյալում՝ մանավանդ Խրիմյան Հայրիկը, և այսօր Տ. Տ. Վազգեն Առաջինը, միշտ իրենց հայրապետական օրհնությունը և նյութական ու բարոյական օժանդակությունն են րերել Մխիթարի Տան պայծառության համար: Ամեն անգամ Եվրոպա այցելելիս Հայոց ներկա Հայրապետը սուրբ Էջմիածնի օրհնությունը և անձամբ Իր ողջույնն է տարել Մխիթարյան միաբանությանը:

Այս պատմական հոբելյանի ստիժով, երբ հարգանքով և երախտագիտությամբ նրշվում է մեծ Սեբաստացու ծննդյան 300-ամյակը, ս. Էջմիածինը Հայոց Հայրապետի բերանով իր օրհնությունն է րերում նրա հիշատակին, կյանքին և բազմաբեղուն վաստակին՝ մաղթելով, որ ս. Ղազարի հեռավոր կղզու վրա, այդ պատմական մեծաստանի խաղաղության ու լուրջության մեջ, միշտ վատ մնա ջանք հայ մշակույթի, սերն ու պաշտամունքը հայրենիքի, որոնց ծառայությանը նվիրեց Մխիթարը իր ողջ գիտակցական կյանքը:

ՊԱՐԳԵՎ ԸԱՀԲԱԶՅԱՆ

